# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

08.05.2015թ. N---------------------------------------

## Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն   Ո Ւ Ղ Ե Ր Ձ
### *ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

***Կոտայքի մարզի հարգարժա՛ն բնակիչներ***

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ:

Մայիսի 9-ը խորհրդանշում ու ամբողջացնում է մեր ժողովրդի բազմադարյա պատմության բազում հերոսական իրողությունները և բոլորիս համար հերթական անգամ ստեղծում է հպարտության, ինչպես նաև համազգային ոգևորության ինքնատիպ զգացողություններ:

Օրվա խորհուրդն ու մեր ողջ հաղթանակների բերկրանքն իրենց հավաքական ներկայությամբ այսօր դարձյալ վերաիմաստավորում են հայ մարդու՝ անսահման հայրենասիրությամբ լեցուն նկարագիրը, որոնք տարբեր ժամանակներում ուղեկցվել են բացառիկ սխրագործություններով և հաստատուն արիությամբ:

Այսօր մենք տոնում ենք Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյա հոբելյանը և հերթական անգամ փառաբանում այն բոլոր հայորդիներին, ովքեր կերտել են այդ նշանակալի հաղթանակը:

Տոնական այս օրը հաղթական գույներով է լցրել նաև հայ ժողովրդի նորօրյա պատմության էջերն ու ազդարարել Շուշիի ազատագրումը:

Յուրօրինակ տրամադրություններով լեցուն այս բացառիկ տոնի առիթով պետք է մեծագույն փառքի արժանացնենք հաղթանակած հայ ազգի բոլոր այն նվիրյալ զավակներին, ովքեր տարբեր ժամանակներում հերոսաբար հեղինակել են մեր բոլոր փառապանծ հաղթանակները:

Կրկին շնորհավորում եմ այս հիասքանչ տոնի կապակցությամբ և ցանկանում, որ մեր ժողովուրդն այսուհետ ևս տոնի նոր հաղթանակներ, իսկ մեր հայրենիքում թևածի միմիայն խաղաղությունը:

***Հարգանքներով***

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ